

**Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական աշխատակիցների կողմից գրված
մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, անհատական ցուցահանդեսների,
սպորտային նվաճումների համար խրախուսման կարգ**

Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական աշխատակիցների կողմից գրված
մենագրությունները, ուսումնական ձեռնարկները, անհատական
ցուցահանդեսները, սպորտային նվաճումները (այսուհետև՝ աշխատանք(ներ))
խրախուսելու համար սահմանել խրախուսման հետևյալ չափանիշները.

1. Առաջին աստիճանի աշխատանքներ են համարվում՝

ա) գիտական հայտնագործությունը,
բ) ԿԳ Նախարարության կողմից երաշխավորված (թույլատրված)
դասագրքերը, գ) արտասահմանյան երկրներում, ազգային պատկերասրահում և
(կամ) նկարիչների տանը կազմակերպված անհատական ցուցահանդեսները,
դ) արտասահմանյան և հանրապետական մենահամերգները, միջազգային
երաժշտական փառատոներին մասնակցությունը, դրանց նախապատրաստումը,
նշված երաժշտական միջոցառումներին դասախոսի կողմից երաժշտական
խմբ(եր)ի և (կամ) անհատ կատարող(ներ)ի նախապատրաստումը,
ե) օլիմպիադաներին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին որպես մարզիկ
մասնակցությունը, նշված սպորտային միջոցառումներին դասախոսի կողմից
մրցանակային տեղ գրաված մարզիկի կամ թիմի նախապատրաստումը:

2. Երկրորդ աստիճանի են համարվում՝

ա) ինստիտուտի պատվերով (ծավալի մասին նշումով) գրված դասագրքերը,
ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ տպագրված 12 և ավելի տպագրական մամուլ
(այսուհետև՝ ՏՄ) ծավալով մենագրությունները, ուսումնամեթոդական ձեռնարկները,
բառարանները,
բ) Նեղ մասնագիտական հայտնի միջազգային ամսագրերում տպագրված և լուրջ
արձագանք ստացած գիտական աշխատանքները
գ) Վանաձորի պատկերասրահում կազմակերպված և առնվազն 3 շաբաթ
տևողությամբ անհատական ցուցահանդեսները,
դ) քաղաքային մենահամերգները և (կամ) համերգների կազմակերպումը
(դեկավարումը) քիմիագործների մշակույթի պալատում կամ
պետթատրոնում, այդ համերգներին դասախոսի կողմից դափնեկիր
ուսանողական երաժշտական խմբ(եր)ի և (կամ) ուսանող անհատ
կատարողների նախապատրաստումը,
ե) հանրապետական մրցումներում և միջազգային մրցաշարերում մրցանակային տեղ
զբաղեցնելը, նշված միջոցառումներին դասախոսի կողմից մրցանակային տեղ
գրաված մարզիկի կամ թիմի նախապատրաստումը:

3. Երրորդ աստիճանի են համարվում

ա) ամբիոնի երաշխավորությամբ տպագրված մենագրությունները,
ուսումնամեթոդական ձեռնարկները, մեթոդական ուղեցույցները,
բ) անհատական ցուցահանդեսները ինստիտուտում, Վանաձորի մշակութային
օջախներում (պատկերասրահում՝ մինչև 2 շաբաթ տևողությամբ),

զ) մենահամերգները և (կամ) համերգների կազմակերպումը ինստիտուտում, Վանաձորի մշակութային օջախներում (բացի 2,դ. կետում նշվածներից),

դ) Վանաձորի քաղաքային մրցումներում մրցանակային տեղ գրավելը, դասախոսի կողմից նշված մրցումներում մրցանակային տեղ գրաված մարզիկի կամ թիմի նախապատրաստումը:

Ծանոթություն 1: Քանի որ ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի չափանիշների՝ գիրքը պետք է ունենա առնվազն 3 SU ծավալ (48 էջից ոչ պակաս), մինչև 3 SU ծավալ ունեցող աշխատանքները ինստիտուտի գիտխորհրդի հաստատմանը չեն ներկայացվում և տպագրվում են առանց նրա հաստատման:

Վերոհիշյալ աշխատանքների համար սահմանվում են խրախուսման հետևյալ ձևերը.

4. Առաջին աստիճանի աշխատանքների հեղինակները պարգևատրվում են 100000դրամ:

5. Երկրորդ աստիճանի աշխատանքների հեղինակները՝

ա) 9-ից մինչև 12 SU ծավալի աշխատանքների, սպորտային և երաժշտական միջոցառումներում առաջին մրցանակային տեղ գրավելու դեպքում (մոտավորապես 80000 դրամ):

բ) 6-ից մինչև 9 SU ծավալի աշխատանքների, սպորտային և երաժշտական միջոցառումներում երկրորդ մրցանակային տեղ գրավելու դեպքում (մոտավորապես 60000 դրամ),

գ) 3-ից մինչև 6 SU ծավալի աշխատանքների, սպորտային և երաժշտական միջոցառումներում երրորդ մրցանակային տեղ գրավելու դեպքում (մոտավորապես 40000 դրամ):

Ծանոթություն – Ճշգրիտ մասնագիտությունների համար, համապատասխանաբար, մինչև 9, մինչև 6 և մինչև 3 SU –ի դեպքում:

5.1. 2գ և 2դ կետերում նշված աշխատանքները պարգևատրվում են ամբիոնի ներկայացմամբ՝ վերոհիշյալ սանդղակին համապատասխան:

6. Երրորդ աստիճանի աշխատանքները պարգևատրվում են ռեկտորի շնորհակալագրով:

6.1. Երրորդ աստիճանի աշխատանքները կարող են խրախուսվել ռեկտորի կողմից նաև դրամական պարգևով՝ ամբիոնի ներկայացմամբ և հիմնավորմամբ:

6.2. Ռեկտորի շնորհակալագրով լրացուցիչ կարգով կարող են պարգևատրվել նաև առաջին և երկրորդ աստիճանի աշխատանքները:

7. Գրքի լրամշակված (վերանայված) վերահրատարակությունը պարգևատրվում է նախորդ պարգևատրման 50 % ի չափով, իսկ աստիճանի փոփոխության դեպքում՝ ըստ նոր աստիճանի սանդղակի:

Ծանոթություն - 2: Գիրքը լրամշակված է համարվում, եթե նախորդ հրատարակության համեմատությամբ պարունակում է առնվազն 25% ի չափով նորույթ: Գրքի լրամշակվածության մասին եզրակացությունը տալիս է ամբիոնը:

8. Արտոնագրված գյուտերը հավասարեցվում են առաջին աստիճանի աշխատանքներին:

9. Ինստիտուտի պատվերով օտար լեզուներից, գրաբարից ու միջին հայերենից կատարված թարգմանությունները գնահատվում են տպագիր աշխատանքներին ներկայացվող չափանիշներով՝ ըստ թարգմանված մասի SU ծավալի:

10. Աշխատանքների համահեղինակները պարգևատրվում են ըստ մասնակցության աստիճանի (բացի երրորդ աստիճանի աշխատանքները):

11. ՀՀ և արտասահմանյան այլ բուհերի կամ կազմակերպությունների աշխատակիցների հետ համահեղինակված աշխատանքների դեպքում խրախուսվում է ՎՊՄԻ-ի դասախոսը՝ ըստ իր մասնակցության աստիճանի:

12. ՎՊՄԻ-ի դասախոսների՝ ՀՀ և արտասահմանյան այլ բուհերի և կազմակերպությունների երաշխավորությամբ կատարված (կամ համահեղինակված) և աշխատանքների համապատասխանությունը վերոհիշյալ չափանիշներին քննարկվում է ինստիտուտի գիտխորհրդում, իսկ խրախուսման ձևի (կամ մերժման) մասին որոշումը կայացվում է սույն կանոնակարգի չափանիշների հիման վրա:

13. Խրախուսման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը, ա) ամբիոնի միջնորդությունը,

բ) ամբիոնի եզրակացությունը (7-րդ կետի դեպքում), գ) ամբիոնի հիմնավորումները (2գ, 2դ, 6.1. կետերի դեպքում), դ) արտոնագրի պատճենը (8-րդ կետի դեպքում), ե) գիտխորհրդի որոշումը (12-րդ կետի դեպքում):

13.1. Տարբեր ամբիոնների դասախոսների համատեղ աշխատանքների դեպքում ներկայացվում է ամբիոնների կամ ֆակուլտետի դեկանի միջնորդությունը:

13.2. Խրախուսման համար անհրաժեշտ փաստաթղթերը ուղարկվում են գիտական մաս, որն այնուհետև դրանք երկշաբաթյա ժամկետում ներկայացնում է ռեկտորի կամ առաջիկա գիտխորհրդի հաստատմանը:

14. ՎՊՄԻ-ում պետական կամ այլ ֆինանսավորմամբ կատարված աշխատանքները դրամական պարզներով չեն խրախուսվում:

15. Առանձին աշխատանքների վերաբերյալ, որոնք նախատեսված չեն սույն կանոնակարգով, ինստիտուտի ռեկտորը և (կամ) գիտխորհուրդը իրավունք ունեն խրախուսման վերաբերյալ որոշում կայացնելու՝ կանոնակարգով նախատեսված չափանիշների սահմաններում:

16. Խրախուսումը կատարվում է ռեկտորի կամ գիտխորհրդի կողմից որոշումը կայացվելուց հետո առավելագույնը 3 ամսվա ընթացքում: